

ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՏԻ ՇՈՒՐՋԸ

Ի. Ն. ՇԱՊՈՒՆՏ

Ժամանակակից բառագիտության ամենահիմնական և դեռևս չվճռված խնդիրներից մեկը բառի և նրա սահմանների որոշման հարցն է, որի հետ սերտորեն կապվում է նաև բառական համանունների խնդիրը: Եվ պատահական չէ, որ վերջին ժամանակներս համանուն բառերի ուսումնասիրությունը ավելի հաճախ է զբաղվում լեզվաբանների ուշադրությունը:

Համանուն բառերի ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն բառարանագրության, այլ նաև լեզվի ընդհանուր տեսության որոշ հարցերի ուսումնասիրման տեսանկյունից: Լեզվի համակարգային բնույթը բացահայտելիս, հաճախ, անհրաժեշտ է լինում լեզվական միավորների համակարգային կապերը քննել բառային մակարդակում: Այդ կապերը, սակայն, բավարար չափով չեն ուսումնասիրվել: Այս հանգամանքը մեծ դժվարություն է ստեղծում համանուն բառերի ուսումնասիրության համար:

Այժմ համանուն բառերի ծագումը, զարգացումը, գործառությունը ուսումնասիրում են ամենատարբեր լեզվաբանական ուղղություններ. «Մեր հարյուրամյակում լեզվաբանության ոչ մի բնագավառ չի ունեցել այնպիսի արագընթաց հաջողություններ, ինչպես համանունների ուսումնասիրությունը,— նկատել է անգլիացի լեզվաբան Ս. Ուլմանը:— Այդ պրոբլեմին նվիրված դրականությունը այնքան առատ է, այնքան անսպասելի են ստացված արդյունքները, այնքան յուրահատուկ են կիրառվող մեթոդները, որ այդ պրոբլեմների վճռման համար լեզվաբանության մեջ առաջացել է մի հատուկ ենթաճյուղ, որը կարելի է անվանել համանունաբանություն»¹:

Ձևայած համանունների ուսումնասիրության զծով այդքան շատ բան է արվել, այնուամենայնիվ, մինչև այժմ դրանց որոշումն ու սահմանումը շարունակում է մնալ վիճերի ու տարակարծությունների առարկա. դեռևս չկա համընդհանուր կարծիք համանունների էության, դրանց սահմանման վերաբերյալ: Գոյություն ունեցող տարբեր սահմանումները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. Դրային սահմանումներ, երբ համանուն բառերի համար բնորոշ են համարում գրության նույնությունը, անտեսելով արտասանությունը²:

2. Հնչյունային սահմանումներ, երբ համանուն բառերի համար բնորոշ են համարում նույն արտասանությունը³:

¹ S. Ullmann, The principles of semantics, Glasgow, 1951, p. 125.

² An Etymological Dictionary of the English language, by Walter Skeat, Oxford, new ed., 1909.

³ О. С. Ахманова, Очерки по общей и русской лексикологии, М., 1957, стр. 107. Р. А. Будагов, Введение в науку о языке, М., 1958, стр. 39. Л. А. Булаховский, Введение в языкознание, М., 1954, стр. 45.

5. Հնչյունա-դրալին սահմանումներ՝ Երբ համաձայն բառերի համար բնորոշ են համարում նույն արտասանությունը և դրությունն նույնությունը՝

Համանուն բառերի հարցում դրալին կողմը հիմք ընդունելը մեզ կտանի սխալ ուղիով: Չնայած դրավոր խոսքի հույժ կարևորությունը, հասարակության հաղորդակցության հիմնական միջոցը մնում է բանավոր խոսքը (խոսակցական խոսքը, սաղիտն, հեռուստացույցը, հնչուն կինոն, թատրոնը, ձայնագրությունը և այլն): Դրավոր խոսքը զործնականում բանավոր խոսքի դրաֆիկական արտադրանքներում և հույժ դրությունն նույնության հաշվի առնելը նպատակահարմար լինի ուսուցողական տեսակետից և այդպես մատուցվի դպրոցական դասադրերում, լայց դիտական դրականության մեջ, համանունների դասակարգման ժամանակ դա մեզ կհանգեցնի սխալի: Եվ, Վերջապես, համանուն բառերի համար դրությունն նույնությունը հիմք ընդունելու դեպքում հնարավոր չի լինի ուսումնասիրել դիր շունեցող լեզուների համանուն բառերը:

Վերադառնալ սահմանումներից ավելի հիշտ են «հնչյունային» սահմանումները, այնպեսով, որքանով համանուն բառերի համար բնորոշ են համարվում արտասանության նույնությունը: Սակայն այդ սահմանումների (ինչպես նաև և՛ ավանդական, և՛ ժամանակակից տերմիններով՝ ձևակերպվող սահմանումներին՝ «ձև և բովանդակություն», «արտահայտության պլան և բովանդակություն» պլանն) բնորոշ է մի թերություն. հաճախ է խոսվում իմաստների (բովանդակության պլանի) տարբերության մասին, առանց կոնկրետ կերպով դաստիարակելու բառական և բերականակոն իմաստները:

Որոշ լեզվաբաններ համանունները սահմանում են ըստ Սոսյուրի տերմինների Սրինակ՝ Շ. Բային համանունները սահմանում է առանց «բառ» տերմինի. «Համանուն կոչվում են երկու նշաններ, որոնք ունեն նույնակա նշանակիչ և տարբեր նշանակիչ»: Խման սահմանումը, սակայն, հատկորեն չի սահմանադրում համահնչյունների տարբեր ախերը, համանուն և բաղմիմաստ բառերի սահմանները: Այս սահմանմամբ համանուն բառեր են համարվում նաև կանախտային, շարահյուսական համանունները:

Գոյություն ունի նաև համանուն բառերի տարբեր բմրոնում. շատ լեզվաբաններ, մասնավորապես բառարանագիրներ, համանուն են համարում միայն տարբեր ծագում ունեցող բառերը, իսկ իմաստային փոփոխության հետևանքով առաջացած համահնչուն բառերը չեն դիտում որպես այդպիսի: Այդ բմրոնումը, սակայն, հիշտ չի և չի կարող լեզվի ներկա փրձակի համանունների վերաբերյալ զոհացուցիչ լինել, բանի որ բացի տարարմատ (гетерогенных) համանուններից կան նաև երբեմնի բաղմիմաստ բառի տարբեր իմաստների միջև եղած իմաստային կապերի իղման հետևանքով առաջացած համարմատ (гомогенные) համանուններ:

Համանուն բառերի սրոշումը, սահմանադրումը պետք է կատարել լեզվի համաժամանակյա բնությունը: Շատ դեպքերում համանունական խմբերը պատմականորեն նույն բառն են (կանգուն—կանդնած, տնխախտ, կանգուն—

6 Н. М. Панекий. Лексикология современного русского языка, М., 1964, стр. 41.

7 Հնչյունա-դրալին սահմանումների մի տեսակն են ձևական սահմանումները, երբ համանուն բառերի համար բնորոշ են համարում նույն «ձևը»:

8 III. Баян, Общая лингвистика и вопросы французского языка, М., 1955, стр. 189.

9 «Лексикографический сборник», вып. IV, 1960, стр. 34.

երկարության չափ, կարմրուկ— հիվանդության անուն, կարմրուկ— կարմրա-
 ռուին, զատիկ— քրիստոնեական տոն, զատիկ— միջատ), բայց լեզվի ներկա-
 միջակում դրանք իմաստային կողմով չեն կապվում իրար հետ: Հնարավոր է
 նաև հակառակ երևույթը. երբեմնի համանուն բառերը միանում են մեկ բառի
 կազմում՝ անկախ դրանց պատմական ծագումից: Իհարկե, նման համանուն
 բառերի իմաստային կապերը բացահայտելու համար պետք է կատարել պատ-
 մական քննություն:

Այժմ մեծ մասամբ «համանունություն» տերմինը օգտագործվում է երկու
 և ավելի միանգամայն տարբեր լեզվական երևույթների նկատմամբ. 1) երկու
 և ավելի բառերի արտասանության պատահական զուգահեռություն, 2) եր-
 բեմնի բազմիմաստ բառի տրոհումից առաջացող տարբեր բառեր: Թեև այս
 համանունություններն իրենց ծագմամբ միանգամայն տարբեր են, բայց յուրա-
 բանչյուր լեզվում դրանք նույն երևույթն են ներկայացնում:

«Համանուն» հասկացությունը բխում է որոշակի հարաբերության հետևան-
 քով առաջացած կոռելյացիայից, այսինքն՝ երկու և ավելի միավորների հըն-
 չական հարաբերությունից: Հենց այդ հնչական հարաբերությունների հետե-
 վանքով է, որ այդ բառերը կապվում են իրար, այսպես կոչված, համանունա-
 կան խմբերով: Համանունների միջև արտահայտության պլանում գոյություն
 ունի նույնության հարաբերություն, իսկ բովանդակության պլանում համանու-
 նական խումբը, որպես կանոն, բնորոշվում է այդ բառերի միջև եղած իմաս-
 տային կապերի բացակայությամբ:

Հաշվի առնելով վերը նշված բոլոր դիտողությունները, համանուն բառերի
 համար կարելի է տալ հետևյալ սահմանումը. Համանուն են կոչվում երկու և
 ավելի բառեր և բառանման. որոնք արտասանությամբ նույնն են, բայց նա-
 կադրվում են բառական կամ բառաբերական կամ իմաստներով:

Համանունների դասակարգման մասին. Թեև արտասահմանյան լեզվաբա-
 նական դրականության մեջ շատ ընդարձակ նյութ կա համանունների վերա-
 բերյալ, բայց դասակարգման համոզիչ սկզբունք չկա: Համանունների շատ
 բառարաններում բառերը մատուցվում են անսխառմ, նույնիսկ շտաբներով
 լրիվ և մասնակի համանունները⁸: Համանունների դասակարգման հաջող փորձ
 են արել սովետական լեզվաբաններ Ա. Ի. Սմիռնիցկին և Վ. Վ. Վինոգրադովը⁹:

Համանուն բառերը բառապաշարի համակարգում կազմում են համանու-
 նական խմբեր, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է երկու, երեք և ավելի
 բառերից: Յուրաքանչյուր համանունական խումբ իր հերթին կազմում է բա-
 ռական ենթահամակարգ: Կառուցվածքային տեսակետից յուրաքանչյուր լեզվի
 իրար նկատմամբ համանուն միավորների կազմը միատեսակ չէ. մի դեպքում
 կարող են համընկնել բառեր, որոնք համանուն են քերականական բոլոր ձևե-
 րում, ինչպես հայերենում. ավի— բուռ, ավի— եղերք, դող— սարսուռ, փող—
 օղակապ, անվազող, վառել— հերկել, վառել— քշել, առաջ շարժել, ֆերթել—
 մաշկը հանել, ֆերթել— բանաստեղծել և այլն, մի այլ դեպքում կարող են

⁸ W. Skeat, Etymological Dictionary of the English Language, Oxford, 1903), H. Ogata, R. Inglott A. Dictionary of English Homonyms, Pronouncing and Explanatory, Tokyo, 1943.

⁹ А. И. Смирницкий, Лексикология английского языка, М., 1956, В. В. Виноградов, Об омонимии и смежных явлениях, «Вопросы языкознания», 1960, № 5.

համահասկել քերականական տարբեր արժեք ունեցող բառերը, ինչպես՝ հաս-
տիւն — հաղուտ, հաւղեւն — միասին, աւալ — միկին մի բան հանձնել, աւալ —
ամուսնու թույրը՝ կնոջ հանդէպ, հաւեմ — կանանոց, հաւեմ — հնձեմ, Համա-
նուն բառերի ահա այս հատկանիշներն են հաշվի առնվում Սմիռնիցկու և Վի-
նոգրադովի դասակարգումների ժամանակ:

Սմիռնիցկին անդերևին համանուններն նյութի վրա առանձնացնում է
համանունության տարբեր տեսակները և հիմնավորում դրանց տարբերու-
թյուններն ու նմանությունները: Նա առաջին հերթին սահմանազատում է լրիվ
և մասնակի, այնուհետև՝ բառական և բառաքերականական համանունությունը,
դրանց դասակարգման հիմքում դնելով բառական և քերականական իմաստ-
ների տարբերություն: Սմիռնիցկին բառական համանուններ է համարում այն
գոյգերը, որոնք համընկնում են քերականական բոլոր ձևերում, ինչպես անդ-
րևին տես — մասնա և տես — պատարագ: Երկու բառերն էլ գոյական են և
սևական հոլովում ունեն նույն ձևը: Երկրորդ տիպը բառաքերականական հա-
մանուններն են, որոնք համանունություն են կազմում ոչ բոլոր ձևերում՝ found՝
հիմնել, found՝ find բայի անցյալ ժամանակը:

Վինոգրադովը բնդհանրապես համանուն է համարում միայն այն բառա-
կան միավորները, որոնք արտաքին հնչյունական կազմով համընկնում են
իրենց բոլոր ձևերում, այն, ինչ Սմիռնիցկին անվանում է լրիվ (полный) բա-
սական համանունները, այսինքն՝ իրք համանուն են ոչ թե առանձին բառերի
պատահական ձևերը, այլ նրանց ձևերի ամբողջ համակարգը, քան որում հա-
մանունությունը դիտվում է հենց քերականական նույնական ձևերում: Դրա հետ
մեկանգ, Վինոգրադովը բնդունում է նաև անցումային և խառը ձևեր, որն ան-
վանում է մասնակի համանունություն: Այդ այն դեպքն է, իրք գոյգադիպում
են ոչ թե առանձին ձևեր, այլ դրանց ձևերի նշանակայից մասը:

Բնական և՛ Սմիռնիցկին, և՛ Վինոգրադովը հատակ կերպով սահմանադա-
տում են լրիվ և մասնակի համանունության դեպքերը, սակայն երկուսն էլ
միևնույն երևույթը դիտում են տարբեր կերպ. օրինակ՝ անդերևինում լաի (լույս
և թև), found (հիմնել և գտնել) բառերը առանձին ձևերում գոյգադիպում
են, որը Վինոգրադովը անվանում է համաձևություն (омоформия)¹⁰, իսկ
Ա. Ի. Սմիռնիցկին՝ պարզ կամ բարդ բառաքերականական համանունություն:
Նա բերում է հետևյալ օրինակները.

1. Միևնույն խոսքի մասին պատկա-	2. Տարբեր խոսքի մասի պատկա-
նող համանուններ (պարզ)	նող համանուններ (բարդ)
find found,	light light
finds founds	light's lighter
found, founded	lights lightest
finding founding	
(գտնում է) (հիմնել)	(լույս) (թև)

Երկու դեպքում էլ ինչպես տեսնում ենք, համանունությունը մասնակի է,
քանի որ համընկնում են որոշ բառերի առանձին ձևեր: Բերված օրինակները
ցույց են տալիս, որ այդ բառերը գոյգադիպում են միայն այս ձևերում, մնացած
բոլոր ձևերում դրանք չեն գոյգադիպում:

¹⁰ Վ. Վ. Վինոգրադով, եղվ. աշխ., էջ 131

Այսքանից կարելի է եզրակացնել, որ ամենից բնորոշը և հավաստին համանուն բառերի ստորաբաժանումն է ըստ երկու հատկանիշի:

1. Երբ հաշվի է առնվում զուգադիպվող միավորների քանակային հատկանիշը (լրիվ և մասնակի համանուններ):

2. Երբ հաշվի է առնվում զուգադիպվող միավորների բառական և քերականական հատկանիշը (բառական և բառաքերականական համանուններ):

Լեզվաբանական զրականության մեջ համանուն բառերի շարքում ընդունված է տարբերել:

1. Համագիր բառեր (омогрaфы). այդպես են անվանում գրությամբ նույն, բայց արտասանությամբ տարբեր բառերը (հունարեն *homos*՝ նման, և *σгаіо*՝ գիր). ինչպես՝ *замок*—ամրոց և՛ կողպեք, *мукa*—ալյուր և՛ տանջանք:

2. Համահունչ բառեր (омофoны). այդպես են կոչվում այն բառերը, որոնք ունեն նույն արտասանությունը, բայց գրությամբ տարբեր են (հունարեն՝ *homos*—նման, միանման, *pl onē*—հնչյուն), ինչպես հայերեն՝ անոթ—անոթ, աղտ—ախտ, որդ—որք: Ոմանք համահնչականներ են համարում այն բառերը, որոնք տարբեր ձևահնչությային կազմություններում արտասանությամբ համընկնում են, ինչպես ռուսերենում *зук*—*зуг*, *паз*—*пасс*. Ոմանք էլ համահնչականներին են դասում նաև իմաստով տարբեր այն բառական միավորները (*пруд* և *прут*), որոնք միատեսակ են հնչում ուղղական և հայցական հոլովներում, բայց ունեն տարբեր հնչությային կազմություններ, որոնք հանդես են գալիս այդ բառերի այլ ձևերում, ինչպես նաև ածանցավոր կազմություններում, ինչպես՝ *прут*—*пруда*, *прутик*—*прудик*¹¹:

Համագրությունները չի կարելի դասել համանունների թվին, քանի որ այդ բառերը համընկնում են ոչ թե արտասանությամբ, այլ միայն գրությամբ: Ինչպես նշվեց, թեև գրությունը արտասանությունից հետո բառի կրկնորդ կոլմն է, այնուամենայնիվ, երկրորդական է, ունի պատմական բնույթ և համանունների բնորոշման համար հիմք հանդիսանալ չի կարող: Ուստի համահնչականները պետք է դասվեն համանունների շարքին:

Բացի համահնչականներից և համագրություններից ոմանք տարրերում են նաև կարգահամարները (паронимы) (հունարեն՝ *paree*՝ մոտ, *ομγπια*՝ անուն)¹², Դրանք արտասանությամբ մոտ են, բայց գրությամբ և իմաստով տարբեր, ինչպես լուրջյուն—լուրջյուն. ալբեյ—ալբիլ, *гама*—*гамма*, *банька*—*банка*: Պետք է կարծել, որ այս բառերը ոչնչով չեն հիշեցնում համանուններին, բանի որ բոլոր հատկանիշներով տարբերվում են նրանցից:

Ինչպես տեսնում ենք, տարբեր հետազոտողներ տարբեր սկզբունքներով են մոտենում բառական համանուններին և դրան կից հասկացություններին: Ամենատարբեր աշխատանքների քննությունը մեզ բերում է այն համոզման, որ տարբեր հեղինակներ նման կազմ և հարաբերություն ունեցող համանունական խմբերը կոչում են տարբեր անվանումներով, իսկ տարբեր բնույթ ունեցող կրկնությունները հաճախ կոչում են մեկ տերմինով: Այսպես, տարբեր բառերի հարացուցային ձևերում հնչական զուգադիպվող միավորները առանց լրացու-

¹¹ *Տե՛ս* А. А. Реформатский, Введение в языковедение, М., 1967, стр. 84.

¹² Б. Н. Шапский, Лексикология современного русского языка, М., 1964, стр. 42.

դիչ ընդհանրման մի հեղինակն անվանում է «մասնակի համահունություն»։
 մյուսը՝ «համահնչակություն», երրորդը՝ «համաձևություն»։ Որոշ դեպքերում
 տարրեր երկույթների նույնացումը բխում է մասամբ սոսյուրյան լեզվի և խոս-
 քի փոխհարաբերության ոչ «իշտ հաշվառումից, լեզվական և խոսքային պլան-
 ները հստակ շտարբերելուց, ինչպես նաև հարացուցային և շարակարգային
 հարաբերությունները շփոթելուց, (օրինակ՝ ТОСКУ Я—ТОСКУЯ, СТИХИЯ—СТИХИ և
 տարրեր տիպի միավորները Գալիկոս-Ֆեոդորովը դիտում է որպես համա-
 ձևեր)։ Հարացուցային համահունությունը մերթ անվանվում է ձևաբանական
 համահունություն, մերթ՝ համաձևություն և այլն։

Համահունների սահմանման, դասակարգման, ինչպես նաև նրանց հարող
 լասկացությունների սահմանադատման հարցում չկա միասնական սկզբունք
 ոչ դպրոցական դասադրքերում, ոչ բուհական ձեռնարկներում և ոչ էլ մենա-
 դրություններում։ Իմ շափաղանց զօվարացնում է բոլոր լեզուներին հատուկ
 լեզվական ալգ երկույթի ուսումնասիրությունը։ Գուցե համահուն բառերի
 տվելի խոր և բազմակողմանի ուսումնասիրությունը կոնկրետ լեզվի բառա-
 պաշարի համակարգում, ինչպես նաև նրանց դորձառության քննությունը խոս-
 քային ակտում (տարրեր կոնտեքստներում), կօժանդակեն լուծելու լեզվական
 այս երևույթի հետ կապված հիմնական հարցերը։

К ВОПРОСУ ОБ ОМОНИМАХ

Р. И. ШАЛУНЦ

Резюме

Происхождение омонимов, их распространение и функционирование в языке интересовало многих лингвистов и стало предметом исследования различных лингвистических направлений. Тем не менее до сих пор в вопросе об определении омонимов нет единой точки зрения. Одни исследователи характерным признаком омонимов считают звучание, другие—звучание и написание, третьи—только написание, игнорируя тождество звучания.

В данной статье подвергнуты критическому рассмотрению определения омонимов, данные различными языковедами.

Пока нет единого принципа классификации омонимов и определения смежных с ними языковых понятий, что, несомненно, препятствует исследованию омонимии. Изучение омонимии как своеобразного факта языка особенно важно в лексикологии и, в частности, в семасиологии.

13 Е. М. Галкина-Федорук, К вопросу об омонимах в русском языке, Русский язык в школе, 1954, 3, стр. 19.